ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՑ

361
Ա-23

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱՄԵԱՅ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1908-1910

ՇՐՋԱՆՆԵՐՈՒ

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ճ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
1911

361
Ա-23

31.01.2013

42.660



ԼԵՌՆԱՁԵՒ «ԼԵՌՆՈՅ ՍՈՍ ՄԱՅՐԱՂԱՆԴԷՆ ՈՒ ԻՐ ԱՇՏԱՐԱԿՆԵՐԸ»

ՀԱՅԿ-ՍՕՐԱ

827

1 MAR 2010

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընկերութեան Անցեալը եւ Ներկան

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆը հիմնուած է 1879 Ապրիլ 11ին Սկիւտարի մէջ՝ գեղատի օրիորդներու ձեռքով, գաւառի հայ իգական սեռին դաստիարակութեան օգնելու նպատակով։ Հայ կանանց առաջին միութիւնն է որ իր կանոնաւոր կազմակերպութիւնը ունեցած ըլլայ, և առաջին ձեռնարկը հայ կնոջ կողմէ՝ բարոյական հաղորդակցութիւն մը հաստատելու համար իր գաւառացի քոյրերուն հետ։

Թէ որքան յաջողած է իր նախնական քայլերուն մէջ երեսունըմէկ տարի առաջ, չատ պարզ է հետեւցնել, երբ յիշենք թէ քանի մը գեղահասակ աղջիկներու շուրջը հաւաքուեցան խակոյն Պոլսոյ թէ մտաւորական և թէ բարձր դասու տիկիններն ու օրիորդները։ Նոյն իսկ Գասը-Գիւղի մէջ պատկառելի տիկիններէ կազմուած միութիւն մը անմիջապէս եկաւ միացաւ Ազգանուէրին՝ չատ կարեւոր ուժեր բերելով անոր։

Քիչ ատենէն, Մամանաֆիւղեր կազմուեցան նաև Պրուսայի, Ռուսճուքի և Երիզայի մէջ, որոնցմէ իւրաքանչիւրը իր օգտակարութեան բաժինը նուիրեց մեր Ընկերութեան։

Թիֆլիզի Տիկնանց Բարեգործական Ընկերութիւնն ալ սատարեց մեր ջանքերուն կարեւոր գումար մը ղրկելով։

Դժբախտաբար, Ընկերութեանս կազմութեան առաջին ձմեռը ահռելի սով մը կը կոտորէր Հայաստանի գաւառները, և մենք այդ մեծ աղէտքին առջև պան



ՀԱՅԵՑ ԳԱՂԱՔԸ

մը կանգ առնք կազմակերպելու համար մեծ պարահանդէս մը Սուլթանին հոլանաւորութեան ներքև, որուն հասոյթին կէսը, 600 ոսկի, յատկացուեցաւ սովեալներուն։

Յետոյ սկսանք մեր նպատակին գործադրութեան։ Եւ որովհետև Ընկերութիւնս ոչ փորձառութիւն ունէր գաւառական վարժարաններու կազմակերպութեան մասին, ոչ ալ գաւառներու հետ յարաբերութիւններ, խոհեմութիւն համարեց ընդունիլ Միացեալ Ընկերութեանց հրաւէրը՝ անոնց միջոցաւ գործելու համար. և իր առաջին վարժարանը բացաւ Բղիի Գասապա գիւղը։ Յետոյ հետզհետէ դպրոցներ հաստատեց Հաճըն, Մուշ, Սղերդ քաղաքներուն և Զարսանճագի Բերրի գիւղաքաղաքին մէջ, որոնց չրջանաւարտ սանուհիները յետոյ գացին պաշտօնավարել չրջակայ աւաններու դպրոցները, և ոմանք կը դասախօսեն այսօր մեր նոր նախակրթարաններու տարրական կարգերուն։

Արժան է որ մեր երախտագիտական յարգանքը մատուցանենք մեր հին չրջանի ողբացեալ ընկերուհիներու յիշատակին, արձանագրելով անմոռանալի անունները անոնց որ, զանազան թուականներու, գործօն դերեր ստանձնելով, սատարած են Ընկերութեանս յառաջդիմութեան. Տիկնայք՝ Ալեանաքեան Սրբուհի, Աղաբէգեան Արտեմիս, Զաքարեան Երանուհի, Խանճեան Զերաֆէթ, Միրասեէտեան Մաքրուհի, Ջունդ Նեկտար, Սեղրոսեան Եղիսաբեթ, Տավուտեան Մանիկ։

Նաև Տիկնայք և Օրիորդք Ապրօ Աղաւնի, Սաֆոս Քրիստինէ, Թաշճեան Նեկտար, Հաճեան Սաթենիկ, Մամիկոնեան Տիրուհի, Մանկասարեան Նուրիկ, Յակոբեան Սաթենիկ, Նորատունկեան Մաքրուհի, Զարաղլեան Երմոնէ, Պիլզրեան Մարի, որոնց մեծ մասին աշխատակցութիւնը վայելելու բախտը ունինք մեր նոր չրջանին մէջ ալ։

Ուրեմն Ընկերութիւնս, այսպէս անձնուէր ու ժրաջան ընկերուհիներով չրջապատուած, ամէնէն զնահատուած, սիրուած, կոչուած էր մեծամեծ ծառայութիւններ մատուցանելու իր երկրին, վարժարաններ բանալով Հայաստանի և Կիլիկիոյ ամէնէն յետին անկիւններն իսկ, երբ հասան արհաւիրքի օրերը։ Արդիւնեցաւ հանդանակութիւնը, փակուեցան դպրոցները։

Մեր վերջին պարահանդէսը որ զուգադիպած էր 1893ի քօլերայի համաճարակին, գրեթէ դատարկ սրահի մը մէջ տեղի ունեցաւ՝ 500 ոսկիի հանգանակութեամբ, որուն արտօնութիւնը խիստ մեծ դժուարութիւններով կրցան ստանալ անդամուհիները երեք ամիս չարունակ դիմելով Կրթական Նախարարութեան։ Վերոյիշեալ գումարով վճարուեցան վարժարաններուն վերջին ծախքերը, և 120 ոսկիի չափ աւելցաւ զոր տարինք յանձնեցինք Օրմանեան Սրբազանի, խնդրելով որ անեղծ պահուի։ Արտասուալից աչքով կատարեցինք այս տխուր պաշտօնը, այլ լաւագոյն օրեր տեսնելու հաստատ հաւատքով։

Մեր այս հաւատքը պիտի իրագործուէր տառապանքի, անգործութեան, հիւծումի 15 տաժանելի տարիներէ ետքը։ Այն տարիներուն մէջ այդ գումարին



ՑԷՐԹ-ԵՕԼԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

տոկոսկէն մաս մը յատկացուեցաւ ձեռագործի նիւթեր հայթայթելու Մշոյ մեր աղջկանց վարժարանին, որուն ծախքը ստանձներ էր Իզմիրեանց Կոտկի Հոգաբարձութիւնը։ Եւ այդ 120 ոսկիի գումարն էր, որ տոկոսներուն մնացած մասովն 170½ ոսկիի բարձրացած, յետոյ մեր առաջին դրամագլուխը կազմեց, երբ Սահմանադրութեան վերահաստատման հետ վերակազմուեցաւ Ընկերութիւնս, Հմայեակ Սրբազանի հրաւէրով, 1908 Սեպտեմբեր 4ին՝ Բերայի Արուեստոցի սրահին մէջ։

Խանդավառութիւնը մեծ եղաւ մեզ, նախկին անդամուհիներուս համար որ վիրաւոր կորսնցնելէ ետքը, վերստին գտած ըլլալու զգայութիւնը ունէինք մեր հայրենի վառարանին շուրջը որ մեր հոգիները կը տաքցնէր։ Բազմաթիւ նոր անդամուհիներ իրենց երիտասարդ ուժը բերին մեզի, փարելով մեր նպատակին, և ձեռք ձեռքի տալով, սկսանք մեր գործին։

Մեծ եղաւ նաև համակրանքն ու քաջալերութիւնը ժողովուրդին դէպի մեր Ընկերութիւնը. ամէն կողմէ նուէրներ տեղացին, ամէն երկրէ սիրայօժար պատասխանեցին մեր կոչերուն, և մեծ մաս մըն ալ ինքնաբերաբար մատուց իր նպաստը։

Հայ իգական սեռին համակրութեան ամենէն ցայտուն ապացոյցներէն մէկն է Աղեքսանդրիոյ մէջ կազմուած Մասնաճիւղը, նախաձեռնութեամբ Վսեմ. Տիկին Զարուհի Գալֆայեան Խանի և Տիկին Արմինէ Մերամէթճեանի, որոնց յարատև ու կանոնաւոր գործունէութիւնը շատ պատուաբեր և արդիւնաւոր եղաւ Ընկերութեանս համար, ինչպէս կը տեսնուի մեր յաջորդ էջերուն մէջ։

Կարնոյ մէջ ալ կազմուեցաւ Ընկերութեանս մէկ մասնաճիւղը, որ իր նիւթական նպաստէն աւելի, բարոյապէս օժանդակ եղաւ մեզի, իր հոգատարութեան ներքև առնելով Օձնի և Զիթողի մեր նախակրթարանները, ինչպէս մեր Կարնոյ վարժուհիները, որուն վրայ պիտի խօսինք ի տորև։

Իր օժանդակութիւնը բերաւ մեզի նաև Գահիրէի Հայուհեաց Միութիւնը, հիմնուած անձնուէր ջանքերովը Տիկին Արաքսի Բոլատի, որ հակառակ տեղական դժուարին պայմաններու, կանոնաւորապէս յաջողեցաւ իր նպաստը դրկել մեզ շարունակ, ինչպէս կը տեսնուի մեր հաշուեցոյցներուն մէջ։

Մասնաճիւղ մըն ալ կազմեցին Նիկոմեդիոյ վարժարանի տանուհիները, և գումար մը հանգանակեցին Ընկերութեանս համար առաջին շրջանին մէջ։

Անարատ Յղութեան քոյրց վարժարանի աշակերտուհիք եւս իրենց օժանդակութիւնը բերին մեզի ձեռներէցութեամբ իրենց տեսչուհի Քոյր Էլպիս Կապրաչեանի, որուն զարգացած խմացականութիւնը գրական մըն է իր անկեղծ ազգասիրութեան։

Ռոպերթ Քոլէճի հայ ուսանողները իրենց հայրենասիրական ազնիւ զգացմանց ապացոյցը տուին, ի նպաստ Ընկերութեանս հանգանակութիւն մը ընելով իրենց մէջ, ինչ որ կը տեսնուի նուէրներու ցանկին մէջ, և որ կը հաւատանք թէ շարունակելի պիտի ըլլայ ամէն տարուայ համար։



«ԱՋԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ» ՄԱՐԱՇԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ՝ ՕՐԻՆԱՆՈՑԻՆԵՐՆ ՄԷՋ

Նորափթիթ օրիորդներ, Անանա Նաքաշեան, Անանա Սեւեան, Արմինէ Մելքեան, Արփինէ Աճէմեան, Եւգինէ Մեհէրեան, Էմմա Ասատուր, Հնազանդ Նարկիզեան, Նարդիկ և Նարկիզ Փանոսեան, Նուարդ Պոչնակեան միանալով, Ազգանուէր Օրիորդաց Միութիւն անուան ներքև, վիճակահանութիւն մը սարքեցին Բերայի մէջ, և հասոյթը յատկացուցին մեր վարժարաններուն, ինչպէս կը տեսնուի նուէրներու ցուցակին մէջ։ Հակառակ իրենց չատ փոքր հասակին, այնքան լուրջ և կանոնաւոր գործունէութիւն մը ցոյց տուին, որ մեծ յոյս կուտայ մեզի թէ օր մը Ընկերութեանս լաւագոյն գործիչները պիտի ըլլան, և արժանապէս պիտի վարեն զայն։

Իսկ Պոլսէն դուրս, մեր գործին համակրողներու անունները կը տեսնուին մեր հաշիւներուն մէջ, որոնցմէ գլխաւորներէն Տիկին Վերժին Նշանտաճեան Պրուսայի մէջ, Տիկին Մանիկ Գօլճեան Սեմանիկի մէջ, Հ. և Օ. Պոյաճեան էֆէնտիները Օտեսայի մէջ և Ժ. Սայապալեան էֆ. Գոնեայի մէջ հանգանակութիւններ կատարեցին Ընկերութեանս համար։

Այս գրական նպաստներուն նկատմամբ մեր երախտագիտութիւնը յայտնելէ յետոյ յիշեալ անձնաւորութեանց, պարտականութիւն մը ունինք հանդէպ Միհրան և Հրանտ էֆ. Պէզազեաններու որոնք յանձն առին կէսէն աւելի զեղչեր ընել մեր ուսուցչուհիներուն չոգենաւի տոմսակներուն վրայ՝ այնքան բարեացակամութեամբ, որ առանց քաշուելու, երկու տարիէ ի վեր դիմեցինք իրենց չարունակ, և պիտի համարձակինք դիմել այսուհետև։

Մեզի համար մեծ ծախքի դուռ մըն էր նաև գրամի ուղարկումը թղթատարով հեռաւոր քաղաքներ, զոր հաճեցաւ ընդել Լևոն էֆ. Տէմիրճիպաշեան, ստանձնելով այդ առաքումները Հանրային Պարտուց Վարչութեան միջոցաւ յառաջիկայ շրջանին համար։

Բոլոր այս համակրական ցոյցերէն և հարիւրաւոր քաջալերական նամակներէ խրախուսուած, Ընկերութիւնս առաջին տարին իսկ կարող եղաւ բանալ երեք վարժարաններ Մուշ, Զեթուն, Հաճըն։

Այս անգամ նախընտրեցինք մենք մեր ձեռքով գործել, քանի որ ժամանակը փոխուած, սովորութիւններն ու բարքերը աւելի ձեռնտու էին մեր գործունէութեան։ Ուրեմն ամենուրեք անուանեցինք, տեղացւոց իսկ վկայութեամբ, պատուաւոր, զարգացած, անձնուէր ներկայացուցիչներ։

Մուշի մէջ Գեր. Ներսէս Եպիսկոպոս Խարախանեանը ընտրեցինք, և հոն ղրկեցինք իբրև տեսչուհի Օր. Իսկուհի Զիլթճեանը, որ Էսաեան վարժարանի նախկին ըջանաւարտներէն է, և գաստիարակ ուսուցչուհւոյ վկայականով տասը տարիէ ի վեր մեծ յաջողութեամբ պաշտօնավարած է թէ Էսաեան և թէ Նիկողոսեան վարժարաններուն մէջ։

Զեթունի համար ընտրեցինք իբրև ներկայացուցիչ Գեր. Տ. Վաղարշակ վարդապետը, և հոն տեսչուհի ղրկեցինք Օր. Զարուհի Փէչտիմալճեանը որ նոյնպէս Էսաեանի շրջանաւարտուհիներէն է և նոյն վարժարանին մէջ պաշտօնավարած՝ տարիներէ ի վեր մեր աչքին առջև։



ԶԵԹՈՒՆ ԳԱՂԱՔԱՔԸ

Մեր յիշեալ ուսուցչուհիներուն անձնուիրութեան ակներև ապացոյցը ունեցանք, երբ անոնք գպրոցական շրջան մը բոլորելէ յետոյ, հակառակ տեղական պայմաններուն անյարմարութեան, յանձն առին երկրորդ տարին ևս շարունակել իրենց պաշտօնը ճշմարիտ արդիւնք մը ձեռք բերելու եռանդով։

Հաճընի մէջ ունեցանք Դեր. Տ. Ներսէս վարդապետ Դանիէլեանը որ նախախնամական դեր մը կատարեց մեր վարժարաններուն նկատմամբ։ Առաջին շրջանին մէջ չկարենալով արժանաւոր տեսչուհի մը գտնել Հաճընի համար, ամէն հոգ ինքը ստանձնեց. ուսուցչուհիներուն ընտրութիւնը, ներքին կարգադրութիւնները, հաշիւները, թղթակցութիւնները, ամէն բան։ Իսկ բարձրագոյն դասերը անձնուիրաբար յանձն առին Միացեալ Ընկերութեանց տեսուչ Խաչատուրեան էֆ. և իր եղբայրը։ Այս մասին մեծ է մեր երախտապիտութիւնը թէ յիշեալ ազգօրուս Ընկերութեան և թէ իր ազնիւ պաշտօնեաներուն։

Եւ մինչ Ընկերութիւնս կը պատրաստուէր տարածել իր գործունէութիւնը Հայաստանի խորերը, վրայ հասաւ Կիլիկեան աղէտքը, հազարաւոր որբեր անոք ու թափառական թողլով աւերակներու վրայ։

Այն ատեն հաստատուեցան որբանոցները, և մենք ստանձնեցինք բոլոր Կիլիկեան որբանոցներուն աղջկանց կրթութեան հոգը՝ օգնելու համար Կեդր. Որբախնամ Յանձնաժողովին որ իր բոլոր ուժը կ'ապառէր հէք անտէրունջ ազգ նիւթական պիտոյքը հայթայթելու։

Ուրեմն մեր խնամքին ներքև առնք Մարաշի, Տէօրթ-Եօլի, Այնթապի, Հասան-Պէյլիի, Հաճընի որբանոցներուն վարժարանները, գիրք, գրենական պիտոյք և ձեռագործի նիւթեր ղրկելով ամէն տեղ, ինչպէս նաև ներկայացուցիչներ ընտրելով, տեսչուհիներ նշանակելով կամ Պոլսէն ուղարկելով հարկ եղած տեղերը։

Իսկ Ատանան, սուզի և թշուառութեան թատերավայրը, ո՞վ պիտի կազմակերպէր այնտեղ կրթութեան գործը, և ինչ միջոցներով, երբ մեր ելեւմտաց ոյցը ծանրաբեռնուած էր այնքան։ Ճիշդ այն ատեն է որ օգնութեան հասաւ մեզի Մաքրի-Գիւղի Կիլիկեան Որբախնամ Կանանց Ընկերութիւնը, ստանձնելով տարրական նախակրթարանի մը ծախքը, ինչպէս նաև Մելքոնեան եղբարց Փապրիքայի նպաստից մնացեալն տարեկան նուէրը զոր ստացանք մեր Աղեքսանդրիոյ Մատնաճիւղին ջանքով գպրոց մը բանալու համար ի յիշատակ ողբացեալ Յակոբ Պապիկեանի։ Այս վեհանձն նպաստներով քաջալերուած գործի ձեռնարկեցինք այդ աղէտքի երկրին մէջ, մանաւանդ երբ մեր ամէնէն ձեռնհաս անդամներէն Տիկին Արշակունի Թէոդիկ ազնիւ ներշնչումը ունեցաւ ինքզինքը նուիրելու այս յանդուգն գործին։ Ու գնաց իր ձեռքով, արցունքով ու արիւնով ողողուած փլատակներուն և խաւարին մէջէն մէկիկ մէկիկ հաւաքեց գժբախտ որբուհիները, համախմբեց զանոնք յարկի մը ներքև, սրտապնդեց զանոնք մօր և գրաղէտի իր հոգերուխ խօսքովը, ընտրեց ուսուցչուհիներ, հսկեց ամէն կարգադրութեան, և այն ատեն միայն մեկնեցաւ, երբ գտաւ իրեն արժա-



«ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵՌՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ» ՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ ՊԷՅԼԻԻ ՕՐԻՈՐԴՈՅԻՆ ՄԷՋ

նաւոր յաջորդը, Միհրան էֆ. Քէչիշեանը, տեղւոյն պատուաւոր վաճառականներէն անձնուէր և զարգացած երիտասարդ՝ մը, որ հաճեցաւ մեր ներկայացուցիչը ըլլալ, և այն ատենէն ի վեր անկեղծ գուրգուրանքով աշխատեցաւ ու կ'աշխատի վարժարաններուն բարգաւաճման և յառաջդիմութեան։

Տիկին Թէոդիկ իր դարձին տեղեկութիւններ բերաւ մեզի ոչ միայն Ատանայի այլ և Կիլիկիոյ բոլոր վարժարաններուն մասին, և իր թելադրութեամբ ղրկեցինք Պոլսէն Օր. Սիրանոյշ Ոսկանը՝ Տարսոն, և Օր. Սոֆի Շիշմանեանը՝ Մարաշ։

Ընկերութեանս երեւմտացոյցը հեղհեղ բեռնաւորուեր էր սակայն, և Պոլսոյ ժողովուրդը Ատանայի անհուն թշուառութեամբ զբաղուած, պահ մը մոռցեր էր մեր Ընկերութիւնը։ Նոյն իսկ չատեր կը կարծէին թէ աւելորդ պերճանք մըն էր այլեւս կործանած Կիլիկիոյ համար դաստիարակութիւնը։ Ո՞վ կը խորհէր թէ այդ տխրութեան և սուգի օրերուն՝ որբանոցներու մէջ լեցուած հաղարաւոր տղաքը ինչպէս կարելի պիտի ըլլար ափոփել առանց աշխատութեան, առանց մարզանքի, առանց մտաւոր զբաղում հայթայթելու անոնց։

Դեռահասակ օրիորդներ խորհեցան ասիկա, և Օր. Մարիոս Ստամպոլուեանի ու Օր. Ատրնէ Տօնէլեանի նախաձեռնութեամբ կազմուեցաւ Օրիորդաց Միութիւնը որ կազմակերպեց անմոխրանթաց ցերեկոյթ մը։ Օրիորդները անձամբ բեմ ելլելով, ներկայացուցին Մագնիս թատերախաղը, երգեցին, նուագեցին, տոմակներ զետեղեցին, և առանց ուրիշին օգնութեան, միմիայն իրենց ուժերով գոյացուցին գեղեցիկ հասոյթ մը որ կը տեսնուի մեր հաշուեցոյցին մէջ։ Հարկ կը համարինք յիշել այդ Օրիորդներու անունները որոնք մեծ պատիւ բերին ազգին իրենց դաստիարակութեամբ և գործունէութեամբ, և որոնց տաղանդներէն ու զգացումէն շատ բան կ'ակնկալէ Ընկերութիւնս ապագային.

Ազնիւ Կարապետեան
Ատրինէ Տօնէլեան *(Ատենադպիր)*
Արմենուհի Թէքէեան
Արմենուհի Նարկիլեեան
Արուսեակ Թաշեան
Նագուք Նազաշեան
Զապէլ Թաշեան
Զապէլ Թէքէեան
Զապէլ Ճիվելեկեան
Էլիզ Մոմճեան
Էմէ Եաղուպեան
Թագուհի Բապուճեան
Իսկուհի Գավանոզ *(Ատենապետ)*
Հերմինէ Խաչերեան
Հերմինէ Սալբրեան
Մարի Սիմոնոֆ
Մարի Տիլսիզեան *(Հաւնարակալ)*
Մարիոս Ստամպոլլուեան *(Գանձապետ)*
Մարկրիթ Նազաշեան
Նուարդ Մնտիկեան
Նուարդ Յովհաննէսեան
Նուարդ Վասիլեան
Շերիսան Տերունեան
Շուշան Պօշնակեան
Պեադրիս Մնտիկեան
Սաթենիկ Մոմճեան
Սաթենիկ Վասիլեան
Սիրվարդ Արթինոֆ
Վարդուհի Թօփաքեան
Վարդուհի Կեսարեան
Վիրժինի Աշճան
Տօլորէս Զօհրապ



ՀԱՍԱՆ ՊԷՅԼԻՒ ՕՐՕՍԱՆՑԻՆԵՐԸ ԵՒ ԵՐԿՍԵՌ ՕՐԵՍԵՐԸ

Այսքան յաջող չրջանէ մը ետքը, այլեւս ճամբան հարթուած էր մեր առջեւ։ Մեր բոլոր վարժարաններէն գոհացուցիչ տեղեկագիրներ կ'ստանայինք, եւ մեր պարտականութիւնն էր ուշադրութիւն դարձնել բազմաթիւ խնդրանքներու որոնք ամէն օր կը հասնէին գաւառներէն։

Բայց խոհեմութիւնը մեզի սկզբունք ընտրած ըլլալով, փափաքեցանք հաստատուն հիմի մը վրայ դնել նախ մեր չէնքը։ Մեր հասոյթներուն %20ը արդէն պահեստի դրուած էր, եւ սակայն խորհեցանք մեր վարժարաններուն մէկ տարեկան ծախքը ապահովելէ յետոյ ձեռնարկել նոր վարժարաններու բացման։

Ուրեմն որոշեցինք պարահանդէս մը տալ։

Գրիգոր էֆ. Զօնրաշ մեզի համար եղաւ այն խմաստուն առաջնորդը եւ հզօր նեցուկը որ անհրաժեշտ է կարեւոր գործ մը գլուխ հանելու համար, եւ իրօք կարեւոր գործ մը եղաւ մեր առաջին պարահանդէսը։ Մեր բարեգութ Վեհափառ կայսրը հաճեցաւ շնորհել մեզ իր Բարձր հովանաւորութիւնը, յանձնելս երախտապարտ ձգելով Ընկերութիւնս, եւ Ելեւմտական նախարար Վսեմափայլ Ճավիտ Պէյ՝ հաճեցաւ ստանձնել կարգադիր Մասնախմբի գործոն նախագահութիւնը, ինչ որ յաջողութեամբ պսակեց մեր ձեռնարկը։

Աւելորդ կը համարինք խօսիլ պարահանդէսին մանրամասնութեանց վրայ, քանի որ հայ լրագիրներէ զատ, Պոլսոյ բոլոր թերթերը, թուրք, եւրոպացի, յոյն, միահամուռ տարփողեցին անոր չքնաղ եւ արդիւնաւոր յաջողութիւնը։ Պարտք կը համարինք միայն մեր շնորհակալիքը յայտնել Վսեմ. Բարթող Փաշայի որ Աղեքսանդրիայէն ղրկած էր մեզ fopիյօնի գեղեցիկ նուէրներ, Ռափայել էֆ. Մարկոսեանի եւ Տիկին Էլիզ Էմէրեանի որոնք Բարիզէն ղրկեցին մեզ fopիյօնի ամբողջ կազմածները հիանալի ընտրութեամբ, կարեւոր գումար մը ալ յատկացնելով անոնց իրենց կողմէ, ինչպէս նաեւ Պ. Էակաւ Շանլինի որուն վրձինէն կը պարտինք մեր պարացուցակներուն սիրուն կողքը։

Գործադիր Մասնախումբին մէջ աշխատութեան մեծ բաժին ունեցան Երուանդ Եուսուֆեան, Զարեհ Բէքմէզ, Ի. Իրբանոսեան, Համբարձում Ստամբոլլեան, Հրանտ Ատատուր, Յակոբ Պապեան, Տօքթ. Շահպազ էֆէնտիները, Զարեհ Խան Շամտանճեան եւ Վռամշապուհ էֆ. Սամուէլօֆ որ Ընկերութեան շատ կարեւոր ծառայութիւններ մատուցած է ուրիշ պարագաներու մէջ ալ։

Եւ այս բոլոր ազնիւ ջանքերուն արդիւնքը եղաւ գեղեցիկ գումար մը որ 4% տոկոսով շահու դրուած է Վիէնայի Պանքի մէջ, ինչպէս կ'երեւայ սոյն տեղեկագրին վերջը դրուած հաշուեցուցակէն։

Այլ եւս կարգը եկած էր վարժուհիներու գործին ձեռնարկելու։

Տարոնի գաւառին մէջ վարժուհիներու մը հաստատութիւնը մեզի համար աւագ կարեւորութիւն ունեցող հարց մըն էր անտարակոյս, քանի որ մեծ դժուարութեամբ կրցեր էինք գտնել կարող վարժուհի մը որ յանձն առնէր այդ հեռաւոր գաւառը երթալ, նոյն իսկ գոհացուցիչ պայմաններով։ Ճամբաներու դժուարութիւնը, կլիմայի, սովորութեանց անյարմարութիւնները, տեղական բար-



«ԱՅԳԱՆՈՒՐ ՀԱՅՈՒՀԵՍԱ ԸՆՏԵՐՈՒԹԵԱՆ» ՄԱՐԱԶԻ ՈՐԴՈՒՀԻՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐՈՎ.

քերու տարբերութիւնները ի հարկէ կը տառապեցնեն մեր պոլսեցի Օրիորդները և կը դժուարացնեն իրենց պաշտօնը։ Օրիորդ Զիթճեան առաջինը և միակը եղաւ որ յանձն առաւ երթալ Մուշ, Սասուն և Պուլանըխ, մեր Կովի և Շրնիքի վարժարանները բանալու, յետոյ տարեկան քննութիւնները կատարելու համար։ Բայց ոչ ոք հետեւեցաւ Պոլսէն իր քաջասիրտ վարմունքին։ Իրեն ընկերացաւ Մշեցի տիկին մը, Տիկին Սաթենիկ Անդրէասեան որ Ամերիկայի մէջ տարիներէ ի վեր զբաղած էր ձեւագիտութեամբ և ձեռագործով, զորս կ'աւանդէ մեր Մուշի վարժարաններուն մէջ։ Կարինէն ունեցանք մանկապարտէզպանուհի մը, Օր. Պոզուքլեան, որու մասին միշտ գովեստով կը խօսի մեր տեսչուհին։ Իսկ մնացեալ պաշտօնեաները ընտրուեցան մեր Մուշի հին շրջանի աշակերտուհիներէն, միակները Տարոնի շրջանակին մէջ։

Բայց ո՞ւր պիտի գտնենք ուսուցչուհիներ հարիւրաւոր հայարնակ գաւառներու համար որոնք չարունակ վարժարան կը խնդրեն։ Նոյն իսկ եթէ կարելի ըլլար գտնել մեր փափաքած թուովը վարժուհիներ, ինչ պայմաններով պիտի կարենայինք հաճեցնել զանոնք Պոլսէն մեկնելու։ Հաշիւ ըրած ենք որ գաւառի մը մէջ ուսուցչուհիներ պատրաստելու համար դասարանի մը մէկ տարուան ծախքը՝ Պոլսէն մեկնող վարժուհիի մը տարեկան ամսաթոշակին ու երթեւեկի ծախքերուն հաղիւ պիտի բաւէր։

Սակէ զատ, սա փորձառական համոզման հասած ենք թէ Պոլսոյ մէջ կրթուած օրիորդները, հակառակ իրենց ջանքերուն և զոհողութեանց, չեն կրնար յարմարիլ գաւառի բարքերուն։ Մայրաքաղաքի աղջիկը սովորութիւններ, զաղափարներ, կենցաղագիտութեան և ապրելու եղանակի այնպիսի տարբերութիւններ պիտի տանի որոնցմէ զրկուիլը չի վնասեր գաւառացի աղջիկներու դաստիարակութեան։ Մենք պիտի փափաքինք որ անոնք զարգանան, առանց կորսնցնելու իրենց սակաւապէտ ճաշակները։ Մեր գլխաւոր ջանքը պիտի ըլլայ այնպիսի կրթութիւն մը տալ մեր սանուհիներուն որ իրենց մէջ մշակուին իրենց ցեղային ազնիւ և պարկեշտ բնաւորները, սորվին իրենց տանտիկին, իրենց մայր, իրենց դուստր՝ հնազանդ, աշխատասէր, կարգապահ և խնայասէր ըլլալ. կարգալ, գրել, հաշուել, խորհիլ, խօսիլ, առանց զեղծանելու իրենց բնատոհմիկ պարզութենէն։ Եւ Պոլսոյ հողը, ոչ ալ մթնոլորտը այս վերջին յատկութիւնը մշակելու նպաստաւոր չէ դժբախտաբար։

Ուրեմն որոշեցինք վարժուհիոց մը բանալ Կարնոյ մէջ որ մէկէ աւելի պատեհութիւններ կը ներկայացնէր իբրև կեդրոն շրջակայ հայարնակ քաղաքներուն, և մանաւանդ Սանասարեան վարժարանին այնտեղ գտնուելուն պատճառաւ որուն ուսուցիչներէն կրնայինք օգտուիլ։ Ուստի դիմեցինք Սանասարեան վարժարանի խնամակալութեան որ անմիջապէս հաճեցաւ ընդունիլ մեր խնդրանքը և արտօնեց իր ուսուցիչներուն դասեր տանիլ մեր վարժուհիոցին մէջ։

Վարժուհիոցը բացուած է արդէն Կարնոյ Հոիփսիմեանց վարժարանի շէնքին մէջ որուն մէկ յարկը տեղւոյն Պատ. Ուսումն. Խորհուրդը հաճեցաւ մեր տրամադրութեան ներքև դնել։ Հոն կը յաճախեն նոյն վարժարանին շրջա-

40557
ԱՅԳԵՀԱՏ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ-ՍՈՎԱ.
Ա. ՄԱՍԻՍԵԱՆ
Ա. ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԵԿ.



«ԱՐԳԻԱՆՈՒՐ ՀԱՅՈՒՀԵՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ» ՀԱՅԿԷՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՍԱՀՈՒՍՏԻՆԵՐԸ ՆՐԵՆՑ ԴԱՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

նաւարտներէն և չրջակայ գիւղերէն 30 օրիորդներ՝ ապագային մեր դպրոցներուն մէջ պաշտօնավարելու պայմանաւ։

Ուսուցչական մարմինը կազմուած է Պ. Գէորգ Աբուլեանի տեսչութեան ներքև հետևեալ կերպով.

Պարոն	Մանուէլ Տեհեան	Ուսուցիչ	Հայերէնի
»	Առամ Յակոբեան	»	Ֆրանսերէնի
»	Խոսրով Պապայեան	»	Տաճկերէնի
»	Բաշքերունի Թերզեան	»	Կրօնքի [ռուբեան]
»	Գէորգ Աբուլեան	»	Պատմութեան եւ Աշխարհագ-
»	Գալուստ Կարապետեան	»	Թուաբանութեան
»	Միխայէլ Մինասեան	»	Բնագիտութեան
»	Պօղոս Բամպուքճեան	»	Գրի եւ գծագրութեան
Տիկին	Աղաւնի Տեհեան	Ուսուցչուհի	Առնին տնտեսութեան
»	Հայկանոյշ Օտապաշեան	»	Ձեռագործի
»	Հայկանոյշ Կիրակոսեան	»	Ձեւագիտութեան եւ կարի
Օր.	Փերոնէ Քէօմիւրճեան		Ներքին հսկող

Այս ուժերով և մեր Կարնոյ մանաւանդ Տիկնանց իմաստուն և անխոնջ ջանքերուն շնորհիւ, որոնց կը պարտինք վարժուհիներուն բոլոր կազմակերպութիւնը, ապահով ենք թէ սոյն կրթական հաստատութիւնը շատ արդիւնաւոր պիտի ըլլայ, ապագային մեր ազգին համար։ Ամենայն դէպս մենք մեր կողմէ ամենայն ջանք պիտի թափենք, որպէսզի մեր դպրոցը ամենայն կարելիութեամբ ապահովուի ուսուցչուհիներով։

Կիլիկիոյ համար ալ այս պէտքը զգալի է անչուշտ ինչ որ նկատողութեան պիտի առնենք ապագային։ Սակայն այս տարուան համար աւելի բարեբախտ եղանք այնտեղ։ Օր. Փէշտիմալճեան որ Պոլիս եկած էր արձակուրդի առթիւ, վերստին դարձաւ Զեյթուն տեղացւոց իրեն նկատմամբ ցոյց տուած մեծ համակրութիւնը փոխարինելով, ու հոնկէ գնաց նաև Արպիստան և Եփեսոս բանալու համար այնտեղ մեր երկու նոր նախակրթարանները որոնց անհրաժեշտ պէտքը զգացուցած էր մեզ Տ. Վաղարշակ Վարդապետ։ Ուրախ ենք որ Զեյթունի սակաւաթիւ թուրք հասարակութիւնն ալ համակրութեան մեծ ապացոյց մը տուած է մեզ իր աղջիկները զրկելով մեր դպրոցը, ուր երկու ազգերու համերաշխութիւնը պիտի ամրապնդուի դաստիարակութեան նոյնութեամբ։

Առանձի Պատ. Թաղ. Խորհուրդը գնահատելով մեր վարժարանին մէկ տարուան մէջ ցոյց տուած անակնկալ արդիւնքը, բոլորովին մեզի յանձնեց իր աղջկանց կրթութեան հոգը, պայմանագրուելով մեզի հետ հինգ տարուան համար և կարևոր նպաստ մը յատկացնելով ընկերութեանս, որ անմիջապէս պաշտօնի



«ԱԶԳԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒՀԵՒՆ ԸՆԵՐՈՒԹԵՒՆ» ՁԵՌՈՒՆԻ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՍԱՆՈՒՀԻՆԵՐԸՆԵՐԸ ՄԱՍ ՄԸ՝
ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐՈՒ ՀԵՏ, ՊՈՏՈՑԻ ԵԼԱՆ

գոչեց երկու կարող վարժուհիներ, Օր. Զապել Բարաղամեանը և Օր. Սիրանոյշ Տ. Աբրահամեանը, առաջինը իբրև մանտագէտ ուսուցչուհի և միւսը իբրև ընդհանուր ուսչուհի։ Իրենց աղդեցութիւնը այնքան մեծ եղած է, որ օտար վարժարաններու բոլոր հայ ուսանողուհիները զիմած են մեր դպրոցը։ Անցեալ տարի ունէինք 250 աշակերտուհի, այս տարի յանձնուեցաւ մեզի 500. այս թիւը հետզհետէ աւելնալով այսօր հասած է 750ի որոնց համար հարկ եղած է նոր շէնքեր և նոր ուսուցչուհիներ ալ աւելցնել։

Եւ այս անազին գործին գլուխը կը կենայ մեր ներկայացուցիչ և պատուակալ անդամ Միհրան էֆ. Բէշիկեան, ամէն բան հոգալով, ամէն բան նախաձեռնելով, ամէն բան կարգադրելով թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Իր գործունէութիւնը այնքան անձնուէր, այնքան արագ, այնքան կանոնաւոր, խղճամիտ է այնքան, որ հիացումով կը համակուինք, բարեբախտ համարելով Ընկերութիւնս իրեն պէս անձնաւորութեան մը թանկագին աջակցութիւնը վայելելուն համար։

Հաճընի համար ալ յաջողեցանք այս տարի կարող տեսչուհի մը դտնել, Օր. Վիկտորիա Սամիկեանը, որուն լուրջ նկարագիրը և իր պաշտօնին մէջ ունեցած փորձառութիւնը հաւաստիք մըն են մեզի թէ մեծապէս օգտակար պիտի ըլլայ այդ դժբախտ ժողովուրդին աղջիկներուն։

Համակրանքի և վստահութեան ապացոյց մը տուին մեզ նաև Կիլիկիոյ եղբայրները, մեր խնամքին յանձնելով իրենց Թալասի Վարդ-Պատրիկեան աղջկանց նախակրթարանը, ինչպէս նաև տեղւոյն Թաղ. Խորհուրդը՝ ծաղդ. մանկապարտէզը, բնականաբար իրենք հոգալով ծախքը։ Տեղւոյն ծաղդ. մանկապարտէզը Ազգէն էֆ. Գալֆայեան հաճեցաւ մեր ներկայացուցիչը ըլլալ, և մենք Պոլսէն զրկեցինք իբրև վարիչ-մանկապարտիզպանուհի Օր. Սիրանոյշ Ոսկանը որ արդէն Ընկերութեանս վստահութիւնը գրաւած էր անցեալ տարուընէ։

Մաքրի-Գիւղի Կիլիկեան Որբանոցամ Կանանց Միութիւնը այս տարի փափաքեցաւ Աստանայի դպրոցէն դատ, Հաճընի որբանոցին ալ կրթական ծախքէն մաս մը ստանձնել. այդ որբանոցին սանուհիները անցեալ տարի մեր դպրոցը կը յաճախէին, բայց այս շրջանին՝ Ս. Յակոբայ վանքը փոխադրուած ըլլալով, տեղւոյն հեռաւորութեան պատճառաւ, հարկ եղաւ մանաւոր կազմակերպութիւն մը ընել անոնց համար նոյն իսկ վանքին մէջ։

Կիլիկիոյ բոլոր որբանոցի դպրոցներուն վերին հսկողութիւնը յանձնած ենք Կեդր. Որբանոցամ ընդհ. տեսուչ Խաչատուր էֆ. Գասլեանի որ միանգամայն մեր ներկայացուցիչն է, և խոստացած է մեզ հիմնական բարեփոխութիւններ մտցնել այդ հաստատութեանց մէջ նիւթապէս և բարոյապէս։

Ընկերութիւնս մտադիր է ամէն տարի իր անդամներէն այցելու քննիչներ յղել իր վարժարանները և նորանոր բարեկարգութիւններ սահմանել դիւրացնելու համար մեր ներկայացուցիչներուն ծանր հոգը, զոր անձնուիրաբար



ՀԱՅՐՆԻ Ս. ՑԱԿՈԲԱՅ ՎԱՆՔԸ, ՈՒՐ ԿԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՆԻՆ ՀԻՄՔԱՅ «ԱԶԳԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒՀԵՐՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԱՆ» ՕՐԲ-ՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ, ՄԱՏԵՐԻՆԳԻՒՆԸ ԱՐԻԼԻԿԵԱՆ ՕՐԻՆԱԽՆԱՄ ԿԱՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԱՆ ԾԱՌԷՆՈՎ

ստանձնած են, նպատողութեան առնելով Ընկերութեանս ծանր բեռն ալ որ քըսանէ աւելի գպրոցներու և հազարաւոր աղջիկներու ապագային պատասխանատուութիւնն է։

Այդ բեռը սակայն սիրելի և տանելի է մեզի, քանի որ կը վայելենք հայ ժողովուրդին անսահման գուրգուրանքը, անոր անկեղծ վստահութիւնը և յօժարակամ աջակցութիւնը, ինչպէս նաև Օսմ. Կառավարութեան բարեացակամութիւնը որոնք գրաւականն են մեր նպատակին յաջողութեան։

Գործադիր Ժողովոյ

30 Հոկտեմբեր 1910 — Ատենադպիր — Ատենապետ

ՀԱՐՈՒԹԻՒՆ ՇԱԼՃԵԱՆ — ՋԱՊԵԼ Հ. ԱՍԱՏՈՒՐ



«ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» ՄԱՐԱԳԷՆ ՍԱՆՈՒՀԻՆԵՐԷՆ ՄԱՍ ՄԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ[1]

ԱԶԳԱՆՈՒԷՐ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ

Գաւառներու մէջ հայ իգական սեռին դաստիարակութեան նպաստել

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 1. — *Ընկերութեանս կրնայ անդամակցիլ ամէն Հայ երկու սեռէ մէկ բաժնեգնի համար վճարելով մէկ ղրուշ։*

Յօդ. 2. — *Ընկերութեանս պատուոյ անդամ կրնան ըլլալ անոնք որ կը վճարեն ամիսը զէթ 50 բաժին։*

Յօդ. 3. — *Ընկերութեանս բարերար կ'արձանագրուին անոնք որ զէթ 100 ոսկի կը նուիրեն կամ կը կտակեն։*

Յօդ. 4. — *Ընկերութիւնս մանաւանդ կամ ներկայացուցիչներ կրնայ ունենալ ուր որ հարկ տեսնէ։*

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Յօդ. 5. — *Ընկերութիւնս պաշտօնական երկու մարմին ունի. Ընդհանուր Ժողով և Գործադիր Ժողով։*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 6. — *Ընդհ. Ժողովը կը ներկայացնէ Ընկերութիւնը, որուն օրէնսդիր և համարառու մարմինն է։*

Յօդ. 7. — *Ընդհ. Ժողովը կը բաղկանայ առ նուազն 30 երեսփոխանուհիներէ։*

---

[1] Ներկայ կանոնագիրս Ընկերութեան հիմնադրութեան պահուն (1879) ընդունուած և գործադրութեան դրուած ըլլալով, զայն գլխաւոր առաջնորդ ունեցանք մեզ ու գործադրեցինք, բնականաբար օրուան ստիպողական պահանջներուն յարմարցնելով։ Մեր կողմէ տեսնուած պէտքերու համաձայն բարեփոխուած կանոնագրի ծրագիր մը պատրաստած ենք, որ մեր յաջորդ Գործադիր Ժողովոյ ձեռքով պիտի ներկայացուի Ընկերութեանս յառաջիկայ Ընդհանուր Ժողովին։

Յօդ. 8. — Ժողովին անդամներէն 1/4ը երկու տարին անգամ մը վիճակաւ կը դադրի, բայց վերընտրելի է։ Դադարեալներուն տեղ ընտրութիւն կ'ըլլայ Ընդհ. Ժողովոյ կողմէ ներկայացուած եռապատիկ սրբագրելի ցանկի մը մէջէն։

Յօդ. 9. — Ընդհ. Ժողովը երեք տարիսը անգամ մը նիստ կ'ընէ, բայց կրնայ ի պահանջել հարկին արտաքոյ կարգի նիստ գումարել, եթէ Գործ. Ժողովը կամ 10 երեսփոխանութիւններ գրաւոր առաջարկութիւն ընեն։

Յօդ. 10. — Ամէն ընկերուհի կրնայ Ընդհ. Ժողովոյ նիստերուն ներկայ գտնուիլ իբր ունկնդիր առանց ժողովին մէջ ձայն կամ քուէ ունենալու։

Յօդ. 11. — Ընդհ. Ժողովը կրնայ հրաժարեցնել այն երեսխանութիւնները որոնք Ընկերութեանս շահերուն և օրէնքին հակառակ գործելու դիրքի մէջ կը գտնուին։

Յօդ. 12. — Ընդհ. Ժողովը կ'ընտրէ իր Մայր Դիւանը բաղկացեալ Ատենապետէ և Դեր-Ատենապետէ, Ատենադպրէ և Դեր-Ատենադպրէ, որոնց պաշտօնը երկամեայ է և որոնք վերընտրելի կրնան ըլլալ։

Յօդ. 13. — Պաշտօն վարող երեսփոխանութիւները ուրիշ ընկերութեանց մէջ պաշտօնի չեն կրնար կոչուիլ։

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 14. — Գործադիր Ժողովը Ընկերութեան ընթացիկ գործերը կարգադրող և Ընդհ. Ժողովոյ որոշումները գործադրող մարմինն է։

Յօդ. 15. — Գործադիր Ժողովը կ'ընտրուի Ընդհ. Ժողովոյ երեսփոխանութիւններուն մէջէն. կը բաղկանայ 8 անդամներէ. Ատենապետ և Դեր-Ատենապետ, Ատենադպիր և Դեր-Ատենադպիր, Գանձապետ, Համարակալ և երկու Խորհրդական։

Յօդ. 16. — Գործադիր Ժողովոյ պաշտօնը երկամեայ է և անդամները վերընտրելի կրնան ըլլալ։

Յօդ. 17. — Գործադիր Ժողովը կը ներկայացնէ իր հաշուեցոյցը և յաջորդ եռամսեայ եկեմտացոյցը Ընդհանուր Ժողովոյ. նաև տարեգլխուն իր գործառնութեանց համարատուութեան տեղեկագիրը։

Յօդ. 18. — Գործադիր Ժողովը վարժարաններու յայտագիրը կը պատրաստէ, Ընդհ. Ժողովոյ կը ներկայացնէ և յետոյ Ազգային Կեդր. Վարչութեան Կրթական Տեսչութեան վաւերացնել կուտայ։

Յօդ. 19. — Գործադիր Ժողովը տիպողական պարագաներու մէջ պատասխանատուութիւնը առնելով իր վրայ, կրնայ աղատօրէն գործել Ընդհ. Ժողովոյ յառաջիկայ նիստին մէջ գրաւոր բացատրութիւն տալու պայմանաւ։

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 20. — Ընկերութիւնս թէ ընկերուհիներէ և թէ այլ ազգայիներէ ամէն տեսակ նուէր կրնայ ընդունիլ։ Նուիրատուներուն անունները կը հրատարակուին ազգային լրագիրներու մէջ։

Յօդ. 21. — Ընկերութիւնս ինք ուղղակի կամ աղգային կրթական ընկերութեան մը միջոցաւ պիտի հաստատէ իր դպրոցները Հայաստանի և Կիլիկիոյ մէջ, և եթէ հարկ տեսնէ, հոն գտնուած դպրոցներուն պիտի օժանդակէ մասնաւոր պայմաններով։

Յօդ. 22. — Ամէն տարեկան շրջանի մէջ Ընդհ. Ժողովը Ցանձնաժողով մը կ'ընտրէ Գործ. Ժողովոյ հաշիւներն ու մնուկին վիճակը, ինչպէս նաև եկեմտացոյցը ճշդիւ գործադրուած ըլլալը քննելու համար։

ԳԱՆՁԱՑԻՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 23. — Գործ. Ժողովը Ընկերութեանս դրամը ապահով տուներու մէջ պարտի շահու դնել։

Յօդ. 24. — Երբ Գանձապետը 10 ոսկիէ աւելի դրամ ունենայ քովը, պարտաւոր է զայն յանձնել դրամապահին։

Յօդ. 25. — Ընկերութիւնս 4 կտորէ բաղկացեալ կնիք մը ունենալով՝ 2 մասը Ընդհ. Ժողովոյ Ատենապետին՝ 1ը Գործ. Ժողովոյ Ատենապետին, իսկ միւսը Գանձապետին քովը պէտք է մնայ, և դրամապահէն առնուելիք դրամներուն մասին այս 4 կտորներու միացումը կարեւոր է։

Յօդ. 26. — Ընկերութեանս այժմեան ունեցած դրամագլխէն 500ը պահեստի մնալէ զատ, մնացեալ դրամէն 20% ալ շահու կը տրուի, իսկ միւսը Ընկերութեան նպատակին կը գործածուի։

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 27. — Ընկերութիւնս ներքին կանոնագիր մը ունի, զոր Գործ. Ժողովը կը խմբագրէ, և որուն մէջ գծուած են բոլոր այն տրամադրութիւնները որոնք վերաբերութիւն ունին վերոգրեալ Յօդուածներուն գործադրութեան եղանակին հետ, և որոնք հիմնական կանոնագրին պէս անհրաժեշտ գործադրութեան պէտք ունին։

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ

Յօդ. 28. — Եթէ որ և իցէ անակնկալ պատճառաւ Ընկերութիւնս շարունակուելու անկարելիութեան մէջ գտնուի՝ այն ատեն անոր դրամն ու գոյքը Ազգ. Կեդր. Վարչ. Կրթ. Տեսչութեան կողմէ իգական սեռի դաստիարակութեան կը յատկանայ։

Յօդ. 29. — Ընկերութեանս նպատակը անսխալ պահելով, սոյն կանոնագիրը 2 տարի վերջ կրնայ վերաքննուիլ, եթէ հարկ տեսնուի։

ՎԱՒԵՐԱՑԵԱԼ ԿՐԹԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԵՆԷ

1879. ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



«ԱԶԳԱՆՆՈՒՐ ՀԱՑՈՒՀԵՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ՄԱՍՆԱՃԻՆԵՐՆԵՐԸ ՄԱՍ ՍԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԱՆԴԱՄՈՒՀԻՆԵՐ

Տիկնայք եւ Օրիորդք

Ազարեան Գոհար
Ազարեան Տիրուհի
Աճեան Զարուհի
Աստուածատուր Արաքսի
Աւետիս Քրիստինէ
Բապուճեան Հռիփսիմէ
Քալէմքեարեան Զարուհի
Եսայեան Զապէլ
Թիւլպէնճեան Զապէլ
Թորոսեան Էլիզ
Իւթիւճեան Ռոզ
Խաչերեան Զարուհի
Խոսրովեան Արուսեակ
Կիւլպէնկեան Մարի
Կիւլպէնկեան Նուարդ
Հարենց Արուսեակ
Ղուկասեան Նոյեմզար
Ճաքճաքեան Արմինէ
Մամիկոնեան Տիրուհի
Մառք Հայկանոյշ
Նիկողոսեան Աղաւնի
Նշասանեան Վերժին
Նորիկեան Զապէլ
Շամճանեան Պետրոս
Զոփուրեան Վասիլուհի
Պոյաճեան Քրիստինէ
Սալբրեան Սաթենիկ
Սինանեան Պետրոս
Սինեմեան Սրբուհի
Վասիլեան Անանա
Տ. Արթինեան Էլիզ
Քիւրտճերեան Կատարինէ
Օվանբրեան Մարիամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԴԻՒԱՆ

Աստնապետ — Նորատունկեան Մաքրուհի
Դեր-Աստնապետ — Տոքթ. Շանպազ Սեզարին
Աստնադպիր — Թեոդիկ Արշակունի
Դեր-Աստնադպիր — Քամճեան Աշխէն

ԳՈՐԾԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Աստնապետ — Աստուր Զապէլ
Դեր-Աստնապետ — Փափազեան Բերկրուհի
Աստնադպիր — Շալճեան Հերիգա
Դեր-Աստնադպիր — Համբիկեան Զապէլ
Գանձապետ — Ստամպոլցեան Վերժին
Հաշուապալ (*) — Ղազարոսեան Լուիզ
Խորհրդական — Տոքթ. Անեմեան Փարիս
Խորհրդական — Եուսուֆեան Սուլթան
Խորհրդական — Միւհենճիսեան Մարի

(*) Նախապէս Տիկին Արուսեակ Հարենց ընտրուած էր հաշուապալ, սակայն վեց ամիսէն, ճամբորդութեան պատճառաւ հարկադրուեցաւ իր պաշտօնը Թողուլ։

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տեարք

Ասատուր Հրանտ
Եուսուֆեան Երուանդ
Զօհրապ Գրիգոր
Շահպազ Տոքթոր
Սամպոլլուեան Համբարձում
Տ. Յակոբեան Աբրահամ
Վարդգես

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Տիկնայք եւ Օրիորդք

Ատենապետ Գալֆայեան Խան Զարուհի
Ատենադպիր Սպենջեան Լուսի
Գանձապետ Մերամէրճեան Արմինէ
Խորհրդական Կամսարական Գալինիկ
Խորհրդական Մուքաճեան Նունէ

ԿԱՐՆՈՅ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Ատենապետ Տիգրանեան Եպրամսէ
Դեր-Ատենապետ Էսայեան Սիրանոյշ
Ատենադպիր Դարբինեան Ազնիւ
Դեր-Ատենադպիր Տիգրանեան Նուարդ
Գանձապետ Լեփեան Նոյեմզար
Դեր-Գանձապետ Բանջուտեան Լուսվարդ
Հանդարակաղ Մարեան Սաթենիկ
Խորհրդական Դարպասեան Եպրամսէ
» Իզգալացեան Զարուհի
» Երկանեան Լուկրէս
» Տապալեան Սանդուխտ

ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՆԵՐ[1]

1908—1910 ԵՐԶԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Տեարք եւ Տիկնայք

Բապուճեան Հռիփսիմէ
Բարքող Փաւա Երանունի *(Աղեքսանդրիա)*
Բոլաս Արամի *(Գահիրէ)*
Գալֆայեան Խան Զարուհի *(Աղեքսանդրիա)*
Դանիէլեան Տ. Ներսէս Վարդապետ *(Հանքլի)*
Զօհրապ Գրիգոր, *Երեսփոխան*
Էսմէրեան Էլիզ *(Բարիզ)*
Թարաքեան Խաչուն *(Աղեքսանդրիա)*
Թիւլպէնճեան Զապէլ
Հալաճեան Բարսեղ
Ճաւիս Պէյ *(Եղեւմտեան Նախարար)*
Մելքոնեան Եղբարք *(Աղեքսանդրիա)*
Ունճեան Մաքուս
Պոյաճեան Օնիկ եւ որդի *(Օտեսա)*
Սարգսեան Գէորգ եւ Սարգիս *(Աղեքսանդրիա)*
Սարգսեան Սիմոն *(Աղեքսանդրիա)*
Սամպոլլուեան Վերժին
Քէլէկեան Տիգրան Խան *(Բարիզ)*
Քէշիշեան Միհրան *(Ատանա)*
Քոլոլեան Մանիկ *(Սեղանիկ)*

ԴՐԱՄԱՊԱՀՆԵՐ

Վիքթոր Պանք եւ Բերայի Կալուածոց Հոգաբարձութիւն

---

(1) *Ընդհ. ժողովոյ որոշմամբ, Պատուոյ անդամ արձանագրած ենք, Հիմնական Կանոնագրի 2րդ յօդուածին տրամադրութեան համեմատ այս տիտղոսը կրելու իրաւունք ունեցողներէն զատ, զանոնք որ բարոյական կարեւոր ծառայութիւններ մատուցած են Ընկերութեանս։*



«ԱԶԳԱՆՈՒՐ ՀՈՒՅՈՒՆՔԻՐ ՀՈՒՅՈՒՆՔԵՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» ԱՏԱՆԱՅԻ ՎԱՐԺԱՐԱՆԸ
ՄԱՔՐԻՒ ԳԻՒՂԻ ԿԻԼԻԿԵԱՆ ՈՐԴԱԽՆԱՄԻ ԿԱՌԱՒՆՈՎ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԵԼՔՈՆԵԱՆ ԵՂԲԱՐՔՆԵՐՈՎ ՓԱՌԱՊԷՍԻՆ
ՄՆՈՒՈՒՍՈՎ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՄԷՋ

1909 Ա. ՇՐՋԱՆԻՆ ԲԱՑՈՒԱԾ

ՄՈՒՇ ՔԱՂԱՔ. — *Մանկապարտէզ, տարրական և միջին նախակրթարաններ*
ՍԱՍՈՒՆ, ՇԸՆԻՒ ԳԻՒՂ. — *Տարրական նախակրթարան*
ՊՈՒԼԱՆԸՔ, ԿՈՓ ԳԻՒՂ. — *Տարրական նախակրթարան*
ԿԱՐՆՈՅ ԴԱՇՏ, ՕՁՆԻ ԳԻՒՂ. — *Տարրական նախակրթարան*
ԿԱՐՆՈՅ ԴԱՇՏ, ՁԻԹՈՂ ԳԻՒՂ. — *Տարրական նախակրթարան*

1910 Բ. ՇՐՋԱՆԻՆ ԲԱՑՈՒԱԾ

ՄՈՒՇ ՔԱՂԱՔ. — *Բարձրագոյն նախակրթարան*
ՀԱԶԶՕ. — *Տարրական նախակրթարան*
ԿԱՐԻՆ ՔԱՂԱՔ. — *Վարժուհինոց*

ԿԻԼԻԿԻՈՅ ՄԷՋ

1909 Ա. ՇՐՋԱՆԻՆ ԲԱՑՈՒԱԾ

ԱՏԱՆԱ ՔԱՂԱՔ. — *Տարրական և միջին նախակրթարաններ*
ՁԵԹՈՒՆ ՔԱՂԱՔ. — *Տարրական և միջին նախակրթարաններ*
ՀԱՃԸՆ ՔԱՂԱՔ. — *Տարրական և միջին նախակրթարաններ*
ՏԱՐՍՈՆ. — *Մանկապարտէզ (Բ. չրջանին վակուած)*
ՄԱՐԱՇ. — *Տարրական նախակրթարան որբանոցին մէջ*
ՏԷՕՐԹ-ԵՕԼ. — *Տարրական նախակրթարան որբանոցին մէջ*
ՀԱՍԱՆ ՊԷՅԼԻ. — *Տարրական նախակրթարան որբանոցին մէջ*

1910 Բ. ՇՐՋԱՆԻՆ ԲԱՑՈՒԱԾ

ԱՏԱՆԱ ՔԱՂԱՔ. — *Մանկապարտէզ և բարձրագոյն նախակրթարան*
ՁԵԹՈՒՆ ՔԱՂԱՔ. — *Մանկապարտէզ և բարձրագոյն նախակրթարան*
ՀԱՃԸՆ ՔԱՂԱՔ. — *Մանկապարտէզ և բարձրագոյն նախակրթրան*
ՀԱՃԸՆ ՔԱՂԱՔ. — *Տարրական նախակրթարան որբանոցին մէջ*
ԱՑՆԹԱՊ. — *Տարրական նախակրթարան որբանոցին մէջ*
ԱԼՊԻՍՏԱՆ. — *Տարրական նախակրթարան և մանկապարտէզ*
ԵՓԵՍՈՍ. — *Տարրական նախակրթարան և մանկապարտէզ*
ԹԱԼԱՍ.—*Տարրական, միջին, բարձրագոյն նախակրթարան և մանկապարտէզ*

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ ՈՒՍՄԱՆՑ ԾՐԱԳԻՐԸ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. ՏԱՐԻ

Կրօնք. — *Ցիսուսի վարքը՝ բերանացի, և կարճ աղօթքներու բացատրութիւն։*
Հայերէն. — *Ընթերցում, ընդօրինակութիւն, բառերու ծանօթութիւն և բերանացի պատմուածք։*
Իրագիտութիւն. — *Ծանօթութիւն դործածական պարզ առարկաներու։*
Թուաբանութիւն. — *Զորս դործողութիւն տասնաւոր թիւերու՝ դրաւոր և մտաւոր հաշուի վարժութիւն։*
Աշխարհագրութիւն. — *Ծանօթութիւն իրենց բնական տունին, թաղին, շրջակայ դաշտերուն և լեռներուն։*
Գծագրութիւն. — *Պարզ ձեւերու ընդօրինակութիւն դծամարդարանի տետրակներուն մէջ։*
Ձեռագործ. — *Թրիքօ երիզ, քոչէ երիզ, շուլլալ կտաւի վրայ։*
Գիր. — *Ուղիղ գիր տախտակի վրայ կաւիճով, և թուղթի վրայ մատիտով բառերու կազմութիւն։*
Մարզանք. — *Մարմնակրթական շարժումներ շուէտական դրութեամբ։*
Ձայնական երաժշտութիւն. — *Ձանազան երգեր։*

Բ. ՏԱՐԻ

Կրօնք. — *Նոր Ուխտի շարունակութիւն, և ղանազան աղօթքներու բացատրութիւն։*
Հայերէն. — *Ընթերցում, ընդօրինակութիւն, ուղղագրութիւն, բառագիտութիւն, բերանացի պատմուածք։*
Պատմութիւն. — *Հայոց հինգ հարստութեանց նշանաւոր թագաւորները (համառօտ)։*
Իրագիտութիւն. — *Ծանօթութիւն առարկաներու, տեղական բոյսերու և կենդանիներու։*
Թուաբանութիւն. — *Զորս գործողութիւնք հարիւրաւոր թիւերու, և մտաւոր հաշուի վարժութիւն։*
Աշխարհագրութիւն. — *Բնական և տեղական։*
Ձեռագործ. — *Գուլպայ հիւսել, շուլլալ խծիկ, օղակ, քոչէ։*
Գծագրութիւն. — *Ընդօրինակութիւն շատ պարզ առարկաներու բնականին վրայէն։*
Գիր. — *Պարզ գիր և գլխագիր։*
Մարզանք. — *Նոյն։*
Ձայնական երաժշտութիւն. — *Ձանազան երգեր ու եւրոպական ձայնանիշեր։*

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. ՏԱՐԻ

Կրօնք. — *Հին Ուխտի համառօտ, Նոր Ուխտի ընդարձակ։*
Հայերէն. — *Բացատրուած ընթերցում, բառագիտութիւն, շարադրութիւն բառերու վրայ, ուղղագրութիւն, արտասանութիւն։*
Իրագիտութիւն. — *Ծանօթութիւններ ընդհանուր բոյսերու, կենդանիներու մասին։*
Պատմութիւն. — *Հայոց ամբողջ, ընդարձակ բացատրութեամբ։*
Թուաբանութիւն — *Զորս գործողութիւն ամբողջ թիւերու, և մտաւոր հաշուի վարժութիւն։*
Աշխարհագրութիւն. — *Օսմանեան երկրի ղանազան մասերը։*
Առնտիկ Տնտեսութիւն. — *Մարմնոյ, ղդեստի, դասարանի և սենեակի խնամք։*
Ձեռագործ. — *Կտաւի վրայ բանուածք* (broderie), *քանըվա, ժանեակ, նուրբ կարեր։*
Գծագրութիւն. — *Առարկաներու ընդօրինակութիւն բնականէն։*
Գիր. — *Պարզ և գլխագիր։*
Մարմնամարզ. — *Նոյն։*
Ձայնական երաժշտութիւն. — *Եւրոպական երաժշտութիւն և ազգային երգեր։*

Բ. ՏԱՐԻ

Կրօնք. — *Հին և Նոր Ուխտի ընդարձակ, հայ եկեղեցւոյ վրայ ծանօթութիւններ։*
Հայերէն. — *Բացատրուած ընթերցում, բառագիտութիւն, շարադրութիւն հարցումներով, ուղղագրութիւն, արտասանութիւն, լուծում։*
Իրագիտութիւն. — *Ընդարձակ բացատրութիւններ կենդանիներու, բոյսերու և անոնց յատկութեանց վրայ։*
Պատմութիւն. — *Հայոց մանրամասնօրէն, և Օսմանեան։*
Թուաբանութիւն. — *Զորս գործողութիւնք տասնորդական թիւերու, ծանօթութիւն տեղական չափերու մասին։*
Երկրաչափութիւն. — *Գիծեր, մակերեւոյթներ, ծաւալներ։*
Աշխարհագրութիւն. — *Եւրոպական և ասիական Թուրքիա ընդարձակ ծանօթութիւններով։*
Առտնի Տնտեսութիւն. — *Կարկտուք, լուացք, ճերմակեղէնի խնամք, արդուկ, առողջապահիկ սկզբունքներ։*
Ձեռագործ. — *Ձեռագիտութիւն ճերմակեղէնի, բանուածք, օյա, դորգաչինութիւն, կամ ուրիշ տեղական ձեռագործներ։*
Գծագրութիւն. — *Ընդօրինակութիւն ղանազան առարկաներու բնականէն, ղարդանկարի վարժութիւն, և յիշողութեամբ դծագրութիւն պարզ առարկաներու։*
Գիր. — *Բոլորագիր, նրբագիր։*
Մարզանք. — *Նոյն։*
Ձայնական երաժշտութիւն. — *Նոյն։*

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ա. ՏԱՐԻ

Կրօնք. — Շարունակութիւն Հին Ուխտի և Նոր Ուխտի, հայ եկեղեցւոյ նշանաւոր հայրապետները և թարգմանիչները. քրիստոնէական վարդապետութիւն համառօտ։

Հայերէն. — Բացատրուած ընթերցում, շարադրութիւն երով, ծրագրով ընդլայնում նիւթերու, արտասանութիւն, բառագիտութիւն, ուղղագրութիւն և լուծում։

Պատմութիւն. — Հայոց մանրամասնօրէն, և Հին Աղգայ։

Թուրքերէն. — Ընթերցում և գրավարժութիւն։

Բնական Գիտութիւնք. — Տաքութիւն, ջուր, օդ, կազմութիւն մարդկային մարմնոյ։

Թուաբանութիւն. — Հասարակ կոտորակներու վարժութիւն և չորս գործողութիւն. սկզբնաւորութիւն երկրաչափութեան։ Առանձին և զիւղատնտեսական հաշիւներու տեսակներ բռներու վարժութիւն։

Աշխարհագրութիւն. — Երկրիս հինգ մասերուն վրայ լրացուցիչ տեղեկութիւններ։

Տնտեսագիտութիւն. — Ամբողջ տան խնամք, կերակուր եփելու վարժութիւն, պահածներու պատրաստութիւն, հիւանդապահութիւն։

Ձեռագործ. — Ձեռագիտութիւն շրջագծատի, բարակ բանուածք, օյա, տանդէլ անկէզ, հաչիւ, ցանցակերպ բանուածքներ, գիլէ, գիւզօ, գորգաշինութիւն, մանուսայագործութիւն և այլ տեղական ձեռագործներ։

Գծագրութիւն. — Ասեղնագործութեան վերաբերեալ զարդանկարներու կազմութիւն, տարբական հեռատատեսի ուրուագրութիւն, յիշողութեամբ գծագրութիւն զանազան առարկաներու։

Գիր. — Պարզ գիր, նրբագիր, գլխագիր, և պարզ նշանագիր՝ ճերմակեղէնի համար։

Մարզանք. — Նոյն, նաև տեղական պարեր։

Զայնական Երաժշտութիւն. — Եկեղեցական Երաժշտութիւն։

Բ. ՏԱՐԻ

Կրօնք. — Քրիստոնէութեան գլխաւոր բաժանումները, հայ եկեղեցւոյ պատրիարքական ու կաթողիկոսական աթոռները։ Եկեղեցական աղօթքներ բացատրութեամբ։

Հայերէն. — Շարադրութիւն զանազան նիւթերու վրայ, բացատրուած ընթերցում ընտիր հատուածներու և արտասանութիւն, բառագիտութիւն, ուղղագրութիւն, լուծում։

Թուրքերէն. — Ընթերցում, գրավարժութիւն, ընդօրինակութիւն։

Պատմութիւն. — Միջին Դար, Նոր Աղգայ և Ժամանակակից։

Բնական Գիտութիւնք. — Բուսաբանութիւն, կենդանաբանութիւն, հանքաբանութիւն։

Թուաբանութիւն. — Տասնորդական և հասարակ կոտորակով չորս գործողութեան վրայ խառն խնդիրներ, տոկոսի խնդիրներ, երկրաչափութիւն, տոմարակալութիւն առանձին և զիւղատնտեսական հաշիւներու համար։

Աշխարհագրութիւն. — Մասաւոր ճամբորդութիւններ աշխարհի այլ և այլ մասերուն մէջ՝ ցամաքէն և ծովէն։ Մանրամասն ծանօթութիւններ աշխարհի զանազան մասերուն նկատմամբ։

Քաղաքացիական Կրթութիւն. — Ծանօթութիւն երկրին վարչական ժողովներուն վրայ (Երեսփոխանական ժողով, Ծերակոյտ), ոստիկանութիւն, տուրք, Ազգ. Կեդր. Վարչութիւն, փոխանորդութիւն և այլն։

Տնտեսագիտութիւն. — Հիւանդապահութիւն, մանկատածութիւն, աղոց և հիւանդներու հագուստները և անոնց տարուելիք խնամքը. գեղաջուրերու պատրաստութիւն, առանձին գեղարան, ընտանիքին առողջապահութիւնը։

Ձեռագործ. — Շրջագծատ ձեւել և կարել, նուրբ բանուածքներ, տանդէլ անկէզ, օյա, ցանցակերպ բանուածքներ, հաչիւ, գիւզօ, գիլէ, կիւրիւռ, գորգաշինութիւն, կտաւագործութիւն, կողովահիւսութիւն և այլ տեղական ձեռագործներ։

Գծագրութիւն. — Կրկնութիւն նախորդ տարուան վարժութիւններուն։

Գիր. — Զարդագիրներու կազմութիւն նուրբ ճերմակեղէններու համար, նաև նշանատախտակներու վրայ գրելու վարժութիւն։

Մարզանք. — Նոյն։

Զայնական Երաժշտութիւն. — Նոյն։

ԾԱՆՕԹ. — Եւրոպական լեզուները մեր ծրագրին մէջ պարտաւորիչ չեն, սակայն եթէ տեղացիք փափաք յայտնեն, կարելի է երկու վերջին տարիներուն մէջ աւանդել։

ՊՈԼՍՈՅ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ (1)

Մականուն Անուն	Ամսական բաժին դրամ
Աբրահամեան Հաճի Կարապետ	1
Աբրահամեան Հայկուհի	2
Ադամեան Զարուհի	1
Ազարեան Գոհարիկ	(2) 10
Ազարեան Տիրուհի	1
Ալէմշան Անտա	3
Ալթունեան Եպրաքսէ	1
Ալթունեան Նիկողոս	1
Ալթունեան Վերգինէ	5
Ալիքսանեան Իսկուհի	2
Ալիքսանեան Մարի	10
Ալիքսանեան Սողոմիկ	2
Ալլահվէրտի Արամ	2
Ալլահվէրտի Էլիզ	4
Ալլահվէրտի Հայկ	5
Ազաթոն Ոգոնէ	5
Ադամեան Հռիփսիմէ	5
Անէմեան Ակիւլինէ	5
Անէմեան Արշալոյս	1
Անէմեան Վահրամ	2
Անէմեան Փարիս	20
Այնաճեան Մաննիկ	2
Այվազեան Օնտիկ	3
Անդրէասեան Ազնիւ	3
Անդրէասեան Խոսրով	1
Անտոնեան Արամ	5
Անտոնեան Եղիսաբեթ	2
Անտոնեան Ռուբինա	2
Աշեան Զարուհի	20
Ապրօ Անժէլ	20
Ասասեան Ֆուլիկ	5

Մականուն Անուն	Ամսական բաժին դրամ
Ասատուր Գալինիկ	10
Ասատուր Զապէլ	10
Ասատուր Էմմա	1
Ասլանեան Պօղոս	5
Ասլանեան Սաթինիկ	2
Ասլանեան Վերգինէ	10
Աստարճեան Արտեմիս	10
Աստուածատուրեան Արաքսի	5
Ավճեան Օնտիկ	2
Ալեան Արշակ	2
Արամեան Ստեփան	1
Արապեան Կարապետ	5
Արապեան Մաննիկ	3
Արապեան Յակոբ	3
Արապեան Ստեփան	5
Արապեան Ոնն	1
Արթինեան Ներշապուհ	5
Արթինօֆ Բօլին	2
Արթինօֆ Սիրվարդ	1
Արթինօֆ Վերգին	5
Արխանեան Ստեփան	2
Արմազանեան Լեւոն	5
Արմենակեան Նազիկ	1
Արսէնեան Ստեփան	2
Արսէնեան Ֆիլոմէն	10
Արտաշեան Ազնաղ	1
Աւետեան Յովհաննէս	5
Աւետեան Վարդուհի	5
